




Ուրդեգրիւր մի գյուղ նախագիծ

Աջակցվում է «Ծագումը: Բացահայտում»-ի կողմից (<http://originsdiscovery.com>)

Supported by **Origins: Discovery** (<http://originsdiscovery.com>)





Որդեգրի մի գյուղ

Ետնապլան

Հայկական գյուղերում ավելի շատ ֆինանսավորման և ներդրումների ճնշիչ կարիք կա: Ճանապարհային ենթակառուցվածքներն աղքատ են, ինչպես նաև շատ հիմնական ծառայությունները, իսկ գործազրկության մակարդակը շատ ոլորտներում բարձր է՝ թողնելով անփութության և նույնիսկ դեպրեսիայի զգացում բազմաթիվ հայերի մոտ: Գյուղացիների ցածր հոգեբարոյական վիճակը հակված է բացատրելու շատ գյուղերի անփութ լիճակը, ինչպես նաև ժանգոտ տրանսպորտային միջոցների և թափփված աղբի առկայությունը, որն հակառակ դեպքում կլինի գրավիչ բնանկար: Շատ քիչ գյուղացիներ բարձր կարծիք ունեն տեղական կամ կենտրոնական կառավարության մասին՝ ընդհանուր թեման այն է, որ նրանք լքվածություն են զգում և աննշան, երբ ամբողջ ուշադրությունը կենտրոնացած է Երևանի վրա:


Վարելով գյուղական բնակավայրերի շուրջ՝ բավականին ակնհայտ է, որ տեղի է ունեցել բնակչության շարժ դեպի Երևան և արտերկիր: Բնակչության նվազումն անխուսափելիորեն հանգեցրել է ցածր գյուղատնտեսական արտադրողականությանը: Գյուղատնտեսական պրակտիկայի ճնշող մեծամասնությունը, կարծես, հիմնված է բնական տնտեսության վրա մարդկանց կենդանիների խնամքի գրեթե քոչվոր ապրելակերպի և աղքատ հավաքական մարքեթինգային փորձի հետ:

Գյուղական բնակչության սակավաքանակությունը նաև նշանակում է, որ գոյություն ունի պոտենցիալ ռազմավարական վտանգ ազգին: Մի դարում, որտեղ մոլորակի վրա մարդաշատության հետ պատերազմներ կլինեն հիմնական սննդի և ջրի մատակարարման համար, Հայաստանի կանաչ հողերը կարող են դառնալ գայթակղիչ թիրախ, հատկապես, որ Հայաստանը շրջապատված է չորային և խիտ բնակեցված հողերով Թուրքիայում, Իրանում և Ադրբեջանում:

Պոտենցիալ

Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսական և բնակչության աճի լավագույն ներուժը ընկած է գյուղատնտեսության, հանքարդյունաբերության և զբոսաշրջության շրջանակներում, մինչդեռ քիչ փաստեր կան ծրագրերի, որոնք աջակցում են զարգացմանն այդ տարածքներում, հավանաբար այն պատճառով, որ կան հիմնարար խնդիրներ, որոնք պետք է լուծվեն, կամ չկան կառուցվածքային միջոցներ՝ ապահովելու նման աջակցություն:

Հայաստանում ֆինանսավորման և ներդրումների լավագույն պոտենցիալ ոլորտներից մեկը սփյուռքահայության կողմից է, սակայն նրանք զգուշանում են ընդգրկվել խոշոր մասշտաբի նախագծերի մեջ, քանի որ 1990-ականներին դասեր են քաղել կոռուպցիայի մասին: Ըստ բազմաթիվ հայերի հարցումների դա դեռ խնդիր է, այնպես որ զարգացումը հիմնականում մնացել է ոչ կառավարական կազմակերպություններին (ՈԿԿ), որոնց մեծ մասն Արևմուտքից է:



«Որդեգրիր մի գյուղ» (ՈՄԳ) ծրագիր

Մենք հավատում ենք, որ նախարարություններից մեկը պետք է առաջնորդի կարևոր ծրագիրը՝ փոխելու ներկայիս նվազող իրավիճակը գյուղական վայրերում: Մենք նկատել ենք, որ Մփյուռքն ու գյուղական Հայաստանը նմանապես անհրաժեշտություն են զգում խանդավառվելու Նախարարության կողմից դեկավարվող մի նոր ծրագրով, որի նպատակն է անմիջականորեն կապել երկրները բազմանշանակ սփյուռքի և ընտրված գյուղի ու նրա շրջակայքի հետ: Որպես օրինակ կարող է լինել, եթե Նոր Զելանդիային հատկացվի Արենին, Նոր Զելանդիայի հայ համայնքը կարող է կառավարել նախաձեռնությունները, որոնք անմիջականորեն օգուտ կբերեն այս տարածքին (ԱՄՆ-ի նման մեծ երկրները կարող են կառավարել մի քանի գյուղեր):

Գյուղի ներկայացուցիչները պետք է ստորագրեն փաստաթուղթ, որը պահանջում է նրանցից՝


- համաձայնել ծրագրին և դրա պայմաններին,
- կազմակերպել գյուղացիներին՝ հեռացնել ամբողջ աղբը և «գեղեցկացնել» գյուղն ու նրա հարակից տարածքները,
- դոնոր երկրի ներկայացուցիչների և այցելուների համար նախապատրաստել ապրելու վայր գյուղում,
- դոնոր երկրի ներկայացուցիչների և այցելուների համար կազմակերպել թարգմանության միջոցներ,
- ծանոթացնել գյուղացիներին ծրագրին, նախապատրաստել և անցկացնել գործունեություններ, ինչպես դոնոր երկրի ներկայացուցիչներին ընդունելությունը:

Նախարարությունը պետք է՝

- ստեղծի հատուկ «ՈՄԳ» միավորում տնօրինելու այդ ծրագիրը՝ խորհրդակցելով մարզպետների հետ,
- մշակի ծրագրի մանրամասները և պայմանագրերի կաղապարները գյուղերի համար,
- տարեկան կտրվածքով վերահսկել գյուղի և սփյուռքի ներկայացուցիչների միջև համաձայնեցված գյուղական նախագծերի առաջընթացը,
- տրամադրի ծրագրի մասին տեսանելի ցուցանակներ՝ կանգնեցնելու համար ընտրված գյուղերում (հատկապես ճանաչելու և ողջունելու դոնոր երկրին):


Դոնոր երկրի Մփյուռքի ներկայացուցիչները պետք է՝


- առաջադրեն «ՈՄԳ»-ի համակարգողին,



- անմիջականորեն համագործակցեն գյուղի ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու ծրագրեր, որոնք կօգնեն գյուղին (օրինակ՝ գյուղատնտեսական դիվերսիֆիկացիա, ինչպիսիք են այգեգործությունը, գյուղատնտեսական սարքավորումները, գյուղատնտեսական ուսուցումը, արտադրանքի մարկետինգը, հանքարդյունաբերության տեխնիկական աջակցությունը, տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների նախագծերը, զբոսաշրջության օժանդակությունը – ցուցանակների տեղադրում, հանգստավայրեր ևն),
- դոնոր երկրում գովազդեն գյուղի և «ՈՄԳ»-ի ծրագրերի մասին, այդ թվում դոնոր երկրի և գյուղական դպրոցների միջև հարաբերությունների խթանումը, և
- հիմնադրամ բարձրացնեն ու բացահայտեն փորձառուների, ինչպիսիք են ուսանողները, կամավորները և մասնագետ փորձագետները, ովքեր կարող են ապահովել ընտրված որդեգրված գյուղը և նրա շրջակա տարածքը:

Մփյուռքահայություն





Մենք աջակցում ենք Վիքիմեդիայի նախաձեռնությունները, որոնց շահառուներն են հանդիսանում հայ երիտասարդները՝ քննարկման հանձնելով դրանք Սփյուռքի ներկայացուցիչներին որպես «Որդեգրի մի գյուղ» -ի միկրոծրագրեր, որոնք ներառում են գյուղերի բնակիչներից վերապատրաստված մանկավարժներ և [Վիքիճամբարները](#):

Ստորև ներկայացված են գործողությունների օրինակներ, որոնք կարող են հաջորդականությամբ ձեռնարկվել Սփյուռքահայության ներկայացուցիչների (ՄՆ) և գյուղի ներկայացուցիչների կողմից (ԳՆ) :

Քայլ	Սփյուռք	Գյուղացիներ
1.	ՄՆ- համաձայնում է ¹ հովանավորել	ՈՄԳ ցուցանակի ² մոնտաժում գյուղում
2.	ՈՄԳ-ի կայքի մշակում	ԳՆ համաձայնում է հետևել ՈՄԳ համաձայնագրին
3.	Գյուղի գովազդում	Մշակել նախագծեր՝ օգտագործելով ձևանմուշը
4.	Նախագծերի գնահատում	Սփյուռքի բնակավայրի ստեղծում
5.	ՄՆ-ը հայտնում է ԳՆ-ին ընտրված նախագծերի մասին	ԳՆ-ը տեղեկացնում է գյուղացիներին
6.	Սփյուռքը արձագանքում է ³ նախագծերին	Գյուղը խոսք է տարածում ՈՄԳ-ի մասին
7.	ՄՆ ուղղորդում է աջակցությունը ԳՆ-ին	ԳՆ-ը տեղեկացնում է նախագծի առաջընթացի մասին
8.	Հնարավոր ՄՆ-ի այցելությունը գյուղ	ԳՆ-ը տեղեկացնում է ՄՆ-ին նախագծի իրականացման մասին
9.	ՄՆ-ը տեղեկացնում է Սփյուռքին և դռնորներին	ԳՆ-ը կազմում է նոր նախագծեր
10.	ՄՆ-ը գնահատում է նոր նախագծերը	ԳՆ-ը կատարում է տարեկան հաշվետվություն մարզպետին


¹ ՈՄԳ փորձի ընթացքում [մեզ](#); իսկ փորձից հետո մարզպետին

² [Արգենտինայի ձևանմուշ](#), [Կանադայի ձևանմուշ](#), [Ֆրանսիայի ձևանմուշ](#), [Վրաստանի ձևանմուշ](#), [Գերմանիայի ձևանմուշ](#), [Ռուսաստանի ձևանմուշ](#), [ԱՄՆ-ի ձևանմուշ](#)

³ Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր միկրո-նախագիծ ղեկավարվի Սփյուռքի անդամի կողմից, և Սփյուռքի մեկ անդամ էլ վերահսկի բոլոր նախագծերի առաջընթացը

Թափանցիկություն

Յուրաքանչյուր նախագծի բյուջե և ծրագրերի իրականացման ժամանակ ծախսված որևէ գումար պետք է հրապարակվի առնվազն երեք ամիսը մեկ անգամ յուրաքանչյուր առնչվող գյուղացու և սփյուռքահայության վերանայման համար: Մա համաձայն ՀՀ գյուղապետարանի կանոնավոր բյուջեի համար ներկայիս օրենքի:



Մփյուռքահայությունը պետք է հաշվի առնի հետևյալը՝


- վստահություն ստեղծելու նպատակով ավելի լավ է պարզապես սկսել մի քանի փոքր միկրոծրագրերի միջոցով,
- պնդել նախագծի առաջընթացի վերաբերյալ լուսանկարների/սկայայի միջոցով ապացույցների վրա,
- բոլոր գյուղերը համապատասխան ՀՀ օրենքի իրենց կանոնավոր գործունեության վերաբերյալ ունեն հրատարակված բյուջե, այնպես որ, պնդել, որպեսզի «ՈՄԳ» նախագծերի և դրանց բյուջեի մասին տեղեկությունները տպագրվեն նույն ձևով (տես «ՈՄԳ» համաձայնագիրը Հավելվածում)
- նախատեսել Մփյուռքի ներկայացուցչի կամ Հայաստանում վստահելի անձի այցը գյուղ:

Ծրագրի վերջնական արդյունքը

Ծրագրի բանալին այն է, որ այն լինի թափանցիկ և նախագծի վրա հիմնված՝ հանձնելով հատուկ ծրագրեր, որոնք օգուտ կբերեն գյուղին՝ օգտագործելով Նախարարության կողմից մշակված կադապարները: Առաջին ծրագրի առավելությունները պետք է լինեն՝

1. «ՈՄԳ» ծրագրի մասին ցուցանակների տեղադրումը, այնպես որ ճանապարհորդներն էլ կարող են հրավիրվել ներգրավվելու և տեղյակ լինելու ծրագրին,
2. միկրո ծրագրեր, որոնք պարտադիր չէ, որ կապված լինեն դրամական փոխանցումների հետ վստահություն կառուցելու համար, ինչպես օրինակ դպրոցների համար գրքեր ուղարկելը,
3. գյուղական դահլիճի/սրահի կառուցումը, որտեղ կարող են մնալ դոնոր ներկայացուցիչները և փորձագետները (ինչպես ուսուցիչները, ինժեներները ևն), իսկ եթե գյուղն արդեն ունի համապատասխան հաստատություն, ապա շեշտը պետք է դրվի վերանորոգման վրա (Նախարարությունը կարող է մանրամասնել պահանջվող ստանդարտները),
4. դեպի գյուղ և տարածք մուտքի ճանապարհների բարելավումը (եթե դա է հիմնական ճանապարհը, ապա դա պետք է լինի մարզային իշխանությունների հարցը), հետո նախագծերն, առաջնահերթության հաջորդականությամբ, համաձայնեցվում են գյուղի և դոնոր երկրի ներկայացուցիչների միջև, ինչպիսիք են՝
 - ա) այլընտրանքային հոսանքի աղբյուրները,
 - բ) կրթությունը (մասնավորապես գյուղատնտեսական պրակտիկայի),
 - գ) զբոսաշրջության խթանումը, և
 - դ) տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների ծրագրերը:

Յուրաքանչյուր տարի Նախարարությունը կապահովի մի զեկույց դոնոր երկրին, որը կսահմանի ծրագրի ձեռքբերումները, խոչընդոտները և ապագա պլանավորումը: Բոլոր զեկույցները և ծրագրային մանրամասները պետք է կատարվեն ազատորեն և հասանելի լինեն Նախարարության կայքում:




Հայաստանի մարզերի և Հայկական սփյուռքի համապատասխանեցումը

«ՈՄԳ» հայեցակարգը ենթադրում է համակարգված մոտեցում վերջնական հաշվով ապահովելու սփյուռքի աջակցությամբ թե մեծ, թե փոքր գյուղերը: Նախատեսված է, որ ավելի մեծ գյուղերի գյուղապետերը պետք է համակարգեն «ՈՄԳ» -ի հաղորդակցությունն իրենց հարևանությամբ գտնվող փոքր գյուղերի հետ՝ նվազեցնելով ծանրաբեռնվածությունը Սփյուռքից: Դրա համար «ՈՄԳ» ցուցանակը, տեղադրված խոշոր գյուղի մոտ ակնառու դիրքում, նշում է, որ որդեգրված են գյուղը և «նրա շրջակայքը»:


Փորձարկում

Փորձից հետո նպատակն է կրկնօրինակել «ՈՄԳ» ծրագիրն ամբողջ Հայաստանում, այնպես, որ 5000-ից ցածր մարդաքանակ ունեցող ամեն մի բնակավայր ունենա սփյուռքահայ համայնք, որը կաջակցի ու կհետևի նրանց: Առաջատար պետությունները/նահանգները, որտեղ սփյուռքահայության հիմնական մասն է բնակվում, համամասնական ձևով կգուզակցվեն մի գավառի կամ նրա մի մասի հետ՝ կախված Սփյուռքի մեծությունից և գյուղերի քանակից: Այս փուլում, «ՈՄԳ» ծրագրի դիտարկման վերահսկողությունը կփոխանցվի համապատասխանաբար մարզային կամ կենտրոնական կառավարությանը:

Մարզ	Համապատասխան սփյուռքահայության երկրները	Սփյուռքահայություն
Սյունիք (102 գյուղ)	Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) ՝ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսիա, Թուրքմենիստան, Կազախստան, Ուզբեկստան	1,625,000
Շիրակ (116) Արագածոտն (111) Լոռի (105)	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	1,000,000
Արմավիր (94)	Ֆրանսիա	300,000
Արարատ (93)	Արևմտյան Եվրոպա (բացի Ֆրանսիայից)՝ Իսպանիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Նիդերլանդներ, Բելգիա, Ավստրիա, Շվեդիա, Շվեյցարիա, Իտալիա, Դանիա	131,000
Գեղարքունիք (87)	Արևելյան Եվրոպա (բացի ԱՊՀ-ից)՝ Վրաստան, Ուկրաինա, Հունաստան, Լեհաստան, Հունգարիա, Չեխական Հանրապետություն, Ռումինիա, Բուլղարիա, Կիպրոս	300,000
Կոտայք (60)	Հարավային Ամերիկա ՝ Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Վենեսուելա, Չիլի	120,000
Տավուշ (57)	Հյուսիսային Ամերիկա (բացի ԱՄՆ-ից)՝ Կանադա (60,000), Մեքսիկա, Կուբա	60,000
Վայոց Ձոր (41)	Ասիա/Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան ՝ Ավստրալիա (50,000), Նոր Զելանդիա, Լիբանան (50,000), Հնդկաստան, Սինգապուր, Չինաստան, Ճապոնիա, Թայլանդ, Իսրայել (3,000), Իրան (50,000), Թուրքիա (50,000)	200,000



Մեծացնելու համար սեղմել մարզի վրա



Մենք հպարտ ենք հայտարարելու «ՈՄԳ» հայեցակարգի գործարկման մասին փոքր միկրոծրագրերի միջոցով մի քանի գյուղերում՝ կառուցելու վստահություն և բացահայտելու ցանկացած խնդիր անվտանգ, ցածր ռիսկի փորձի միջոցով: Եթե փորձերն հաջող են, ապա մենք կարող ենք տարածել փորձարկումները՝ օգուտ բերելով բոլոր հայկական գյուղերին, այնպես, որ տարածաշրջանները կիսված լինեն և համապատասխանեն երկրի կամ մայրցամաքի հետ:

Եզրափակում

«ՈՄԳ» հայեցակարգը տեսականորեն կարող է հեղափոխականացնել հարաբերությունները Սփյուռքի և շարքային քաղաքացիների միջև և խթանել բարձր աստիճանի վստահությանը կենտրոնական և տեղական իշխանությունների միջև: Այն կարող է արագորեն մեծացնել արտաքին ներդրումներն առավել կարիքավոր ոլորտներում և բացել շատ աշխատատեղերի հնարավորություններ, որտեղ այսօր գոյություն չունեն: Այս ամենից գատ, նախաձեռնությունը կարող է լինել «առաքինի շրջանակ», քանի որ շատ ներդրումներ գալիս են իրական առաջընթացի աճող վստահության և տեսանելիության շնորհիվ:

Հայկական սփյուռքի և առաջնային գյուղի (խոշորագույն գյուղի բնակչությունը 5000-ից պակաս) միջև բավարար փորձից հետո «Որդեգրիր մի գյուղ» ծրագիրը հարկավոր է ընդլայնել շահագրգիռ տարածքի մյուս փոքր գյուղերում:

Հավելվածներ

- «ՈՄԳ» համաձայնագիր գյուղի ներկայացուցիչների կողմից ստորագրելու համար
- «ՈՄԳ» ցուցանակի ձևանմուշ (միայն օրինակը, մյուս ձևանմուշները <http://originsdiscovery.com/Adopt-a-Village%20Armenian.html>-ում)

Որդեգրի մի գյուղ համաձայնագիր Adopt-a-Village Agreement

Ես/Մենք I/We,
գյուղի/village ներկայացուցիչ(ներս)/representative(s), սրանով համաձայնում եմ (ենք)
ենթարկվել ներքոնշյալ սկզբունքներին և պահանջներին/do hereby agree to abide by the
following principles and requirements. Ես/մենք պարտավորվում ենք` /I/We will:

1. ապահովել, որ ցանկացած անձի կողմից չի լինի ոչ մի կոռուպցիա և կեղծ գործունեություն «Որդեգրի մի գյուղ» նախագծերի առաջարկման, նախապատրաստման, անցկացման և հաշվետվության ընթացքում, հետևաբար, նախագծի բյուջեն և ծրագրերի իրականացման ժամանակ ծախսված որևէ գումար կիրառարակվի առնվազն երեք ամիսը մեկ անգամ յուրաքանչյուր առնչվող գյուղացու և սփյուռքահայության վերանայման համար./ensure that there will be no corruption and fraudulent activity by any person during the proposal, preparation, conduct and reporting of Adopt-a-Village projects; therefore the project's budget and any monies spent during the projects will be published at least once every three months for all the relevant villagers and Diaspora to review;
2. նշանակել առնվազն երկու կոնտակտային անձ կանոնավոր կերպով սփյուռքահայության ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու և ժամանակին ու հավաստի կերպով սփյուռքահայ ներկայացուցչի բոլոր հարցումներին արձագանքելու համար./establish a minimum of two contact points to communicate to the Diaspora Representatives on a regular basis and respond in a timely and truthful manner to all Diaspora Representative enquiries;
3. կազմակերպել «Որդեգրի մի գյուղ» ցուցանակի մոնտաժում ակնառու վայրում կամ գյուղի մոտակայքում (ցուցանակի ծախսը կրում են Սփյուռքահայության կամ «Ծագումը» ծրագրի ներկայացուցիչները)/arrange for the erection of an Adopt-a-Village sign in a prominent location in or near the village (cost of the sign to be borne by the Diaspora or representatives of the *Origins* Project);
4. կազմակերպել ազատ, հարմարավետ և մաքուր բնակավայր Սփյուռքահայության ներկայացուցիչների այցելությունների կամ դոնոր երկրից զբոսաշրջիկների այցելությունների համար, նման զբոսաշրջիկների համար ցածր գնով./arrange for free, comfortable and clean accommodation for Diaspora representative visits, or for visits by tourists from the donor nation at a low cost to such tourists;
5. ձեռնարկել քայլեր «Որդեգրի մի գյուղ» նախագծի մասին տեղեկատվությունը տարածելու համար./take actions to spread information about the Adopt-a-Village Project; and
6. ապահովել, որպեսզի առնվազն տարեկան մեկ անգամ մարզպետարանին ներկայացվի «Որդեգրի մի գյուղ» նախագծի առաջընթացի ընդհանուր հաշվետվությունը:/ensure that a report on overall Adopt-a-Village project progress to the Regional Governor's office is made at least annually.

Ստորագրված է/Signed.....

(Գյուղի ներկայացուցիչ(ներ)/Village representative(s)) (Ամիս, ամսաթիվ Date)

Աջակցվում է «Ծագումը: Բացահայտում»-ի կողմից (<http://originsdiscovery.com>)

Supported by **Origins: Discovery** (<http://originsdiscovery.com>)




xx`x

Welcome to xx, Special Village Feature


xx




Հայերեն English Русский



Հայերեն English Русский



Հայերեն English Русский



Հայերեն English Русский

Որդեգրիր մի գյուղ



xx և նրա հարակից տարածքները «որդեգրվել են» Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքի կողմից:

«Որդեգրիր մի գյուղ» ծրագրի (խորհրդանիշը՝ ծիրան) նպատակն է զբոսաշրջության զարգացման նպատակով գեղեցկացնել գյուղերը և աջակցության ուղղակի ծրագրերի միջոցով օգնել հայ գյուղացիներին:

«Ծագումը» ծրագրի (խորհրդանիշը՝ նուռ) նպատակն է բացել աշխարհի աչքերը Հայաստանի գեղեցկության և նրա հնագույն մշակույթի առջև:

Միասին այս երկու ծրագրերը նպատակ ունեն նպաստելու զբոսաշրջության և գործարարության զարգացմանը և Հայոց ցեղասպանության ճանաչմանը:



Adopt-a-Village



xx and its surroundings have been 'adopted' by the Armenian Diaspora in the United States.

The Adopt-a-Village Project (symbolised by the apricot) aims to beautify villages for tourism, and help rural Armenians with direct support projects.

The objective of the *Origins* Project (symbolised by the pomegranate) is to open the world's eyes to the beauty of Armenia and its ancient culture.

Together, the two projects are intended to encourage tourism and business, and recognition of the Armenian Genocide.



Усынови село



xx и его окрестности "усыновлены" армянской диаспорой в Соединенных Штатах Америки.

Проект "Усынови село" (символ: абрикос) стремится украсить села для туризма и поддержать армянским крестьянам с проектами прямой поддержки.

Цель проекта "Происхождение" (символ: гранат) открыть глаза мира на красоту и древнюю культуру Армении.

Вместе эти два проекта призваны поощрять туризм и бизнес, и признание Геноцида армян.

